



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

White Sulphur

petroleum

9/47.925)

S-46

1007

Страны Кавказской д/в фабрика пш.  
кобальтовый В 3-262926  
Кавказская д/в фабрика пш. С. М. Кав.



112 26  
ՄԱՍՈՆԱՅԻ ԽՆԿԱՐԿՈՒՆԵՐ



ՈՐԲԱՎԱՃԱՌ ՊԱՏՈՒԵԼԻՆ

ԵՒ

ԿՊԻԿԱՐ ՍՌԱՋՆՈՒԳԸ

[ԹՈՒՄԱՅԱՆ]

ՄՏ - 75

Անոնք որ մեզք կը գործեն  
ամենուն առջեւ յարգիմանէ,  
որ սարիշներ ալ վախնան:

ՊՈՂՈՍ ԱՌԱՔ.

Ա. Թուղթ առ Տիմ.

Ե. գլ. 20 հմր.



ԳՐԵՑ

ՄԻՍՏՔ ՆԵՐ ՄԻՎԱՅԵԼԼԵՆ

ԲԱՐԻՉ

1903



5 OCT 20

9 (47925)

S-46

ՄԱՍՈՆԱՅԻ ԽՆԿԱՐԿՈՒՆԵՐ



ՌԲԲԱՎԱՃԱՌ ՎԱՏՈՒԵԼԻՆ

ԵՒ

ՋՈՐԴԱՐ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Անոյք որ մեզ Կը գործեն  
ամենուն առջեւ յանդիմանել,  
որ սրբիչներ ալ վախճան:

ՊՈՂՈՍ ԱՌԱՎ:

Ա. Քուղըր առ Տիւր.

Ե. զը. 20 հեր.

1007  
3469

9

ԳՐԵՑ

ՄԻՍԱԿ ՏԷՐ ՄԻՒՍՅԷԼԵԱՆ

806

ԲԱՐԻՉ

1903



## Ա.

## Ո Ր Բ Ա Վ Ա Ճ Ա Ռ Պ Ա Տ Ո Ւ Ե Լ Ի Ն

Հայ ժողովուրդը վերջին տասնեակ տարիներու շրջանին մէջ ունեցաւ շատ տեսակ պոռոտախօս խաբեբաներ որոնք այլեւայլ դիմակներու տակ իւր միամտութիւնը շահագործեցին, բայց եթէ չենք սխալիւր մինչ օրս որբախնամ դիմակի մը տակ որբեր շահագործող հրէշ մը ծնած չէր իւր ծոցէն : Դժբաղքաբար մեր ազեղ « Թիփ » երու հաւաքածոյին մէջ այս վերջինն ալ ունեցանք յանձին պ. Կ. Թուճեանի :

Այս մարդանման արարածն ալ պարագաներու բերմամբ յաջողած էր միամիտներու հաճելի թուող գոյն մը ստանալ : Մի քանի տա-



ըիններ առաջ որքանոց անունն շահաստան մը կը բանայ Լոնտոնի հեռաւոր մէկ անկիւնը եւ ամէն կերպ սուտ « ոէքլամ » ներով կը յաջողի թէ՛ հայ եւ թէ՛ եւրոպացի մարդասէրներու բարի տրամադրութիւնները չարաչար գործածել, ամէն դուռ կը բաղխէ յանուն որբերուն դրամ մուրալու համար եւ կը յաջողի բաւական խոշոր դումարներ իւրացնել : Սակայն որքանոցին յոռի մատակարարութիւնը, իւր ծայրայեղ շահամուտութիւնը եւ որբերուն նկատմամբ ունեցած բիրտ ընթացքը պատճառ կ'ըլլան որ որբերուն խելահասները կը սկսին թողոքի ձայներ բարձրացնել : Բայց ի զո՛ւր : Այդ միջոցին Թումանեան կը սկսի « Պատանի » անունն ողորմելի պատուելիական պարբերական տետրակ մը հրատարակել եւ այնպէս մը ճանչցընել հայ ժողովրդեան որ իբր թէ որբեր ըլլան խմբագրողները , մինչ որբերը՝ հակառակ իրենց կամքին՝ բռնի իբր ծառայ այդ թերթը շարելու եւ տպելու միայն կը գործածուէին , աջ ու ձախ բաւական թուով բաժանորդներ կը ձարէ ինչպէս նաեւ նուիրատուներ , որոնք անգիտակցաբար կը քաջալերեն այս սուտ որբասէրը : Բարիզի հայ գաղութն ալ կը քաջալերէ այս հրէշը , ինչպէս նաեւ ստորագրեալս ալ իր կարգին բաժանորդագրիւններ կը ղրկենք « Պատանի » լղրճուկ



թերթին , նկատելով որ որքան ալ ողորմելի թերթ մ'ըլլայ պէտք է քաջալերել քանի որ որբեր են խմբագրիւնները : Ի տես այս բոլոր շահատակութեանց , կանխաւ Թումանեանի քով գտնուած որբերը կը սկսին Եւրոպիոյ հայ մամուլի մէջ ալ իրենց բողոքը լսելի ընել . ի զուրկ՝ աղերսեն խեղճերը , որպէսզի քննութիւն մը բացուի . ոչ ոք կը լսէ իրենց ձայնը , եւ ոչ իսկ Եւրոպիոյ Հայոց անարժան Առաջնորդը :

Օր մ'ալ , 1902 նոյեմբերի վերջերը , զրօէն չորս աստիճան վար ցուրտ առաւօտ մը , երիտասարդ Հայ մը Բարիզի Արեւելեան կայարանը կ'երթայ ճամբորդ մը զիմաւորելու համար , հոն պատահմամբ կը հանդիպի տասնեութիւն հայ տղաքներու . զարմանօք կը մօտենայ անոնց եւ կը հարցնէ թէ ո՞ւրիկէ կուգան եւ ո՞ւր կ'ուղեն երթալ . իրեն պէտք եղած տեղեկութիւնները առնելէ յետոյ կը մեկնի . չորս ժամ յետոյ , լոկ շաղակրատութեան համար իւր ծանօթներուն պատմած ըլլալով տղոց արդահատելի վիճակի մէջ կայարանը տեսած ըլլալը՝ շատերս սկսանք հետաքրքրուիլ , եւ փնտոել թէ ո՞ւր մնացին այս խեղճ հայ տղաքը : Միւս կողմէն տղոց ընկերացոյ Թումանեանի գործիք երիտասարդ մը որ առաջնորդած էր այդ խեղճերը մինչեւ Բարիզ՝ ծանօթ Հայերու կը զիմէ գումար մը հաւաքելու համար : Վեր-



ջապէս մենք ալ կը հանդիպինք տղոց եւ իրենց առաջնորդին . երեւակայեցէք վառվռուն ու սիրուն աչքերով տասնեւութ աղեկներ որոնցմէ տասնուչորսը գրեթէ առանց զուլպայի կոշիկներն մաշած ու պատտած , պիշ-պիշ մեղ կը նային , ոմանք ցուրտէն սառած ձեռքերնին շփելով , ոմանք՝ հազիւ 8 - 10 տարեկան՝ բուրովին կծկտած գթութիւն կը խնդրեն իրենց աչքերով : Մարդկային ո՞ր սիրտ չի յուզուիր ի տես այս տարաբաղդ երախաներուն որ կըտրելով Պարսկաստանը, Ռուսաստանը ու ամբողջ Եւրոպան , եկած ինկած էին քաղաքակրթութեան այս կեդրոնին մէջ մի քիչ ճանապարհածախք գտնելով Լոնտոն երթալու համար . ո՞վ գիտէ թէ ի՛նչ կը սպասէր իրենց հոն , այն մեծ ովկիանոս քաղաքին մէջ ուր հարիւրհազարներով բնիկ տեղացիներ պատահ մը հաց չունին ուտելու եւ խոռոչ մը իրենց կիսամեծ մարմնոյն հանգիստ տալու համար . . . : կը հարցընենք առաջնորդին թէ ո՞ւր կ'ուզէ տանիլ տղաքը . մանրամասնորէն կը պատմէ մեզ թէ Լոնտոնի շրջակայները գտնուած որբանոցի մը տէրը պ . կ . Թումայեան պաշտօն յանձնած է իրեն տասնեւութ որբեր հաւաքելով Լոնտոն տանիլ , այս գործին յաջողութեան համար Հայրապետին անունով կորիւն վարդապետէն առած վկայական մը ցոյց կուտայ որ կը հաւաստէ

տղոց իրենց առաջնորդին հետ մինչեւ Լոնտոն երթալու համար ճանապարհ ելած ըլլալունին : Հասկցանք իր եւ տղոց բացատրութիւններէն թէ ի՛նչպէ՞ս ամեն տեղ մուրացկանի պէս հասարակաց օգնութեան դիմելով դրամ հաւաքած եւ տղաքը Բարիդ հասուցած է . հասկըցուց վերջապէս թէ Մանչը անցնելու համար 600 ֆրանք կը պակսի : Որքչեցիքնք որ այս սրտածմլիկ տեսարանին դարման մ'ընելու համար հանդանակութիւն մը բացուի , եւ այս նպատակով մի քանի պատուաւոր անձեր զեմուսներ ընել սկսան : Կարգը եկաւ ագամանդավաճառ Տիար Էգնատեանին դիմելու . այս հեռատես մեծատունը անմիջապէս կը պատասխանէ թէ՝ «Տղոց այդ վիճակը զարմանալի կը թուի ինձ , քննեցէք հասկնալու համար թէ իրապէս այդքան խեղճ ըլլալու ստիպուած են , թէ գաղտնիք մը կայ . ձեր առաջարկած կերպով օգնութիւն մը ընելու համակարծիք չեմ » : Երբ այս լուրը առինք , ուղեցինք հասկնալ թէ ինչո՞ւ Տիար Էգնատեան չուզեր օգնութիւն մը ընել : Նոյն ատեն յիշեցինք Պուլկարիոյ եւ ուրիշ տեղերու հայ մամուլին մէջ պ . Թումայեանի նկատմամբ գրուած սոսկալի մանրամասնութիւնները . . . : Մեր մէջէն՝ պարոն Մ . Դարկաքճեան , առաջարկեց որ ինք անձամբ Տիար Էգնատեանի դիմելով խորհուրդ հարցնէ :



Պարոն Գալփաքճեան իր որոշումը գործադրեց եւ քիչ յետոյ դառնալով ժպիտով մը մեզ մօտեցաւ ու ըսաւ . «Մե՛ծ լուր, Տիար Էգնատեանը խոստացաւ տասնուութը որբերը իրեն որդեգրել» : Նոյն վայրկեանին մեր ուրախութիւնը չափ չունէր . աճապարեցինք տղոց քով երթալով աւետեյ այս լուրը . բայց հակառակ մեր ենթադրութիւններուն իրենց օձ առաջնորդը փոխանակ ուրախանալու սկսաւ տխրիլ . ըսաւ նոյն իսկ թէ ինքը տղոց Բարիզ կենալուն համակարծիք չէ եւ ստիպուած է Լոնտոն թումանեանին գրել . նոյն օրը տեղւոյս հոգեւոր հովիւ Հայր Քիպարեանը Լոնտոն երթալու ստիպուած ըլլալով ըսաւ մեզ թէ երբ Լոնտոն հասնի, թումանեանի դիմելով անոր հաւանութիւնը պիտի առնէ տղոց Բարիզ մնալուն համար : Մեր տէրհօր Լոնտոն հասնելէն երկու օր յետոյ թումանեան մեր մէջ տնկուեցաւ, խիստ խորամանկ ձեւերով ուրախութիւն կեղծեց Տիար Էգնատեանը այդ տղաքը որդեգրած ըլլալուն համար եւ հազար ու մէկ դարձուածքներով հասկցուց թէ տղաքը Բարիզ թողելու պատրաստ է, բայց պէտք է (4000) չորս հազար Ֆրանք վճարել իրեն . . . Մեզմէ ամենէն աւելի խոհեմն ու պաղարիւնը բացատրեց թէ իւր այդ առաջարկութիւնը գերավաճառութեան կը մօտենայ . նոյն միջոցին ծանօթ ազգային մը

Լոնտոն հայր Քիպարեանէն եկած նամակ մը բերաւ որուն ամփոփումը հետեւեալն է . — Հայր Քիպարեան Լոնտոն հասածին պէս կը դիմէ թումանեանի բնակարանը եւ կը բացատրէ անոր Տիար Էգնատեանի գերազանցապէս ազնիւ ու մարդասիրական նպատակը . թումանեան միայն իրեն յատուկ ձեւ ու բացատրութիւններով նախ 2500 Ֆրանք կը պահանջէ . Հայր Քիպարեան փափաք կը յայտնէ թումանեանի թէ կ'ուզէ Լոնտոն եկած ըլլալուն համար որբանոցը այցելել, բայց երբ կը ստուգէ որբերու գոյութիւն չունենալը, կը հարցնէ թէ ո՞ւր են ասիկէ առաջ իրեն քով գտնուած որբերը, թումանեան չփոթելով կը պատասխանէ թէ զանազան տեղեր Անգլիացիներու քով յըրած է զիրենք, եւ այլն . Հայր Քիպարեան վարձացած կը հարցնէ թէ՛ ուրեմն ի՞նչպէս կը յայտարարէ որ «Պատանի» թերթը խմբագրողները որբեր են . թումանեան աւելի եւս չփոթած քիչ հեռու ախոռի մը առջեւ երկտասարդ մը ցոյց կուտայ ըսելով . — Այս տղան ալ անոնցմէ է եւ «Պատանին» խմբագրողներէն մին : Հայր Քիպարեան երկտասարդին կը մօտենայ որ նոյն միջոցին թումանեանի անձնական կողքը կը պատրաստէր, ու կը հարցնէ անոր — «Տղաս, դու ո՞րը ես, ո՞ւր ես քու ընկերներդ» : Երկտասարդը կը պատասխանէ թէ



ինքն որբերէն չէ, այլ պարզապէս Թումա-  
 եանի տան ծառան : Այս կատարելապէս երկդի-  
 մի պատասխանները ու յետոյ Լոնտոնաբնակ  
 պատուաւոր ազգայիններու Թումաեանի նը-  
 կատմամբ տուած բոլորովին աննպաստ տեղե-  
 կութիւնները, որբերուն ոմանց ո՛ւր եւ ի՞նչ  
 ըլլալին անծանօթ ըլլալը եւ այլ տխուր  
 լուրերը, խեղճ քանանային սիրտը կ'արիւնեն,  
 եւ անա այս տպաւորութեան տակ կ'ուղարկէ  
 վերոգրեալ նամակը : Մենք այս բոլոր տեղե-  
 կութիւնները առնելով՝ կրկին համբերութիւն  
 ունեցանք Թումաեանի ոչինչ ըսել եւ աղա-  
 չելով խնդրեցինք որպէսզի որբերը Տիար էգ-  
 նաեանի պաշտպանութեան յանձնէ : Ի դո՛ւր .  
 այս մարդանման արարածին սիրտը քար կըտ-  
 րած էր : Որչափ որ նախ Լոնտոն հայր Քի-  
 պարեանէն 2500 Ֆրանք պահանջած էր ու  
 յետոյ մեզմէ 4000 Ֆրանք, անգամ մը եւս իւր  
 ապրանաց սակը բարձրացնելով՝ վերջնակա-  
 նապէս 7000 Ֆրանք պահանջելու գաղափարին  
 վրայ հաստատ մնալու որոշած ըլլալը յայտ-  
 նեց . . . : Պահ մը մտածելով առաջարկեցինք  
 իրեն որպէս զի մի քանի օր սպասէ մինչ ի  
 նոր անօրէնութիւն . Թումաեան, յուսալով որ  
 թերեւս 7000 Ֆրանք պիտի արուի իրեն, մէկ  
 երկու օր եւս սպասելու խոստացաւ : Նոյն օ-  
 րերը աւելի քան քսան անձերու ներկայու-

թեան հարցուեցաւ Թումաեանի թէ ի՞նչու կը  
 պնդէ անպատճառ տղաքը Լոնտոն տանելու՝  
 քանի որ Բարիզ տղոց ներկան ու ապաղան  
 ապահովող բարերար Հայ մը կայ . հարցու-  
 ցինք իրեն որ միթէ հայ որբերը Անգլիոյ  
 պանդոկներու կամ ապակիի պործարաններու  
 մէջ աշխատցնելով կը յուսայ աւելի երջա-  
 նի՞կ ընել զանոնք . հետեւեալ կերպով պա-  
 տասխանեց մեզի —

« Պարոններ, այդ տարբեր հարց է . վաճա-  
 » ռական մարդիկ էք, մտիկ ըրէք ըսածներս .  
 » օրինակի համար կ'ըսեմ, երբ դուք տեղէ մը  
 « ռ եւ է ապրանք մը կը բերէք հոս Բարիզ  
 » եւ անա դէմերնիդ կ'ելլէ մէկը որ կ'ուզէ  
 » զանոնք առնել, մի՞թէ արժէքը չստացած  
 » կը յանձնէք : Արդ, ես բաւական ծախքեր  
 » ըրած եմ, ուզածս 7000 Ֆրանքը եթէ տալու  
 » բարեհաճութիւնը ունենաք, Տիրոջը կամ-  
 » ըով կ'աշխատիմ ուրիշ որբեր ալ բերել . »

Հակառակ որ այս խօսքերով Թումաեան իր  
 հոգւոյն բոլոր մուրը դուրս տուաւ, կրկին  
 համբերեցինք որպէս զի կարենանք առանց  
 գլուխը ջախջախելու բաժնուիլ իրմէ : Մեզմէ  
 մի քանիներ հրապարակաւ խոստացան որ իւր  
 Լոնտոնի որբանոցին վստահելի ապաստանա-  
 րան մը ըլլալը հաստատելէ եւ իւր անձին  
 նկատմամբ նախկին որբերուն կողմէ եղած  
 ամբաստանութեանց ո՛ր աստիճան ճշմարիտ ըլ-



լալը քննել ու ճշմարտութիւնը լուսաբանելէ  
 յետոյ, գրեն Հայրապետին որպէս զի հաճի  
 20-25 որբ եւս զրկել պ. Կ. Թումանեանի ա-  
 նուան : Թումանեանը առանց կարմրելու պա-  
 տասխանեց թէ իր նախկին որբերը «ապերախտ  
 սրիկաներ են », թէ ինքը անկախ որբանոց մը  
 ունի եւ ո եւ է մէկու մը հաշիւ տալու պարտա-  
 ւոր չէ, վերջապէս Հայրապետին իր վրայ ու-  
 նեցած վստահութիւնը մէջ բերելով մերժեց  
 նոյն իսկ մեզ հետ բանակցութեան մտնել :  
 Թումանեան ամէն բան պատրաստած էր տղոց  
 հետ Լոնտոն մեկնելու համար . խեղճերը իւր  
 տրամադրութեան տակն էին, ուզած տեղը կա-  
 րող էր տանիլ, ո եւ է միջոց չկար որբերը այս  
 գաղանին ճիրաններէն ազատելու . գլուխնիս  
 ճաթեցնելու չափ մտածկոտ, իրարու խորհուրդ  
 կը հարցնէինք թէ ի՞նչ պէտք է ընել . գաղ-  
 թականութիւնը կը հակառակէր գրամով որբեր  
 ծախու առնել այս ճիգուիթ որբավճառէն :  
 Ուրիշ ճար չկար : Տեսնելով որ մեզ յետոյ իբր  
 «առեւանգիչ» ամբաստանող Թումանեանը ինքն  
 իսկ իբր ճշմարիտ առեւանգիչ այդ տղաքը  
 պիտի խլէր տանէր եթէ այդպէս մէջտեղը ձը-  
 գէինք, որոշեցինք զանոնք այնպիսի տեղ մը  
 պատշապարել որ Թումանեանէն յափշտակուելու  
 վտանգէն զերծ ըլլային այլ եւս . Ֆրանս-  
 սական ոստիկանութեան զիտութեամբը եւ

օգտուելով պատեհ վայրկեանէ մը երբ Թու-  
 մանեան եւ Փիրան դուրս ելած էին 7000 ֆը-  
 րանքի ետեւէն վազելու, կտոքեր վարձեցինք  
 եւ անմիջապէս տղաքը տարինք բաւական հե-  
 առ ճաչարան մը, գիշերը Բարիզ անցընելով  
 յաջորդ օրը գացինք Մառն գետի վրայ Նօ-  
 ժանի շրջակաները պարկեշտ աշխատաւորի  
 մը պարտէզով շրջապատուած սիրուն բնակա-  
 րանը :

Տղոց ուր ըլլալը Հայր Քիպարեանէ եւ մեր  
 ընկերներէն զատ ոչ ոք գիտէր : Ընթերցող-  
 ներուն կը թողում երեւակայել Թումանեանի  
 հոգեկան տագնապը եւ յուսախաբութիւնը երբ  
 կ'իմանայ տղոց աներեւոյթ եղած ըլլալը . . . :  
 Այս խորամանկ մտրղը առանց ժամանակ կոր-  
 սրնցնելու կը գիմէ ոստիկանութեան, սակայն  
 կանխաւ մեր կողմէն եզելութիւնը իր ճշմա-  
 րիտ գոյնով ոստիկանապետին իմաց տրուած  
 ըլլալուն համար, Թումանեան բոլորովին անը-  
 պաստ պատասխան մը կ'առնէ : Յուսահատ կը  
 գիմէ զատարանին ամբաստանելով զիս իբրեւ  
 «առեւանգիչ» (!) : Նոյն օրերը ոստիկանութեան  
 կողմէ քննիչ մը տղոց եղած բնակարանը այ-  
 ցելելով տեղւոյն վրայ քննութիւն մը կա-  
 տարեց, բնակարանի մաքրութեան, սնունդի  
 եւ ամէն կերպ պէտքերու լի ու լի առատու-  
 թենէն գոհ մեկնեցաւ :



Թուճական եւ տղոց ստրուկ առաջնորդը իրենց բերած տասնեւութը տղաքն, ամբողջն ալ, ճշմարիտ որբեր ճանչցուցած էին, որպէս զի ասով յաջողին քիչ մը՝ աւելի հասարակաց գութը շարժել զէպ ի որբերը՝ ի նպաստ իրենց քսակին... քննելով հասկցանք որ տղոց առաջնորդի եղբօրմէն զատ չորս հատ եւս կար որբ չեղող, որոնցմէ մին չափահաս եւ արհեստով խոհարար, ճամբայ ելած էր Լոնտոն Թուճականի անձին համար «սօլմայ - փիլաֆ» եւ՝ այլ արեւելեան համազամ կերակուրներ եւ փելու համար... մնացեալ երեքը հայր ու մայր ունեցող եւ մին ալ բողոքական պատուելիի զաւակ ըլլալը նկատի առնելով՝ խորհեցանք որ կարելի է ապագային մեզ դատապարտեն ծնողաց կամքին հակառակ տղաքը պահած ըլլալնու համար. այս նկատումով էր նաեւ որ բաւական ժամանակ յետոյ չորս հատ եւս յանձնեցինք, քանզի այս վերջիններուն ծնողքներն ալ Ռուսիա եւ Պարսկաստան արհեստաւոր եւ գործաւոր են եւ միանգամայն տղոց ստրուկ առաջնորդին ծանօթ մարդիկ : Իսկ մնացեալ ինը ճշմարիտ որբերը այսօր Տիրար Էդնահանի պաշտպանութիւնը վայելելու բարեբաղդութիւնը ունին :

Իեկտեմբեր 18ին ամբաստանագիր մը ստացայ որ կը հրաւիրէր զիս յաջորդ օրը քաղա-

քային դատարանի (tribunal civil) նախագահ պ. Տիթի առջեւ : Թուճականի ամբաստանագրին ամփոփումը հետեւեալն է . «Պ, Միսաք Տէր Միսաք յէլեանը վերջերս՝ պատրուակով մը իմանու՞ն Վս Բարիզ հասնող տղաքն առեւանգելով անձանօթ վայր մը պահած է բոլորովին խեղճ պայմաններու տակ . կ'ամբաստանեմ զինք այս աններելի գործին համար, եւ կը պահանջեմ որպէս զի օրէնքը, ոստիկանութեան ու բանակի ուժով՝ իմ պաշտպանութեանս յանձնուած տղաքը ինձ վերադարձնէ եւ ազատէ զիրենք իրենց ներկայ խեղճ կացութենէն» : Որոշեալ օրը ձիւտ ժամանակին ներկայացայ դատարան . Թուճական, փաստաբան մ'ալ հետը միասինս հոն ներկայ էր : Նախագահը խօսքն ինձ ուղղելով՝ պարզեց ամբաստանագրին պարունակութիւնն ու բացատրութիւն պահանջեց թէ ի՞նչու եւ ի՞նչ իրաւամբ տղաքը պահած եմ եւ ի՞նչ էին այսպէս յախուռն ու բացատրութեան կարօտ միջոցներով գործելու պատճառները : Գործին բոլոր մանրամասնութիւնները միտք մի բացատրեցի եւ ըսի թէ ի՞նչպէս պատուելի Թուճականի անձին զէմ ամբողջ Բարիզի հայ համայնքը կասկածներ ունի, թէ ինչպէս տեղւոյս հոգեւոր հովիւ արժ. Հայր Քիպարեան Լոնտոն երթալով քննութիւն կատարած է եւ պ.



Թուժահանի կարծեցեալ որբանոցին նկատմամբ  
 աննպաստ տեղեկութիւններ զրկած է . վերջա-  
 պէս Լոնտոնաբնակ պատուաւոր ազգայիննե-  
 րէն եւ ասկէ առաջ պատ . Թուժահանի քով  
 գտնուած աղոց կողմէն եկած սոսկալի բա-  
 ցատրութիւններով նամակներ ստացած բլ-  
 լալնիս յայտնելով . ըսի թէ այս բոլորը մեր  
 վրայ խղճի պարտք դրաւ արգիլելու Թուժա-  
 հանը որ տղաքը Լոնտոն չտանի : Այս հարցա-  
 քը ննութիւնները դոնփակ ըլլալուն , խնդրե-  
 ցի նախագահէն որպէս զի հրաման տայ դուր-  
 սը սպասող մեր ընկերներէն պ . Զատիկին՝  
 որ լաւ հմուտ է ֆրանսերէնի , որպէս զի գայ  
 ինձ օգնելու . նախագահը թարգմանի պէտք  
 չունենալս շեշտելով մերժեց առաջարկու-  
 թիւնս , բայց երբ բացատրեցի թէ այս պա-  
 րտնը գործին մօտէն տեղեկ է եւ կարող է ե-  
 ղելութիւնը լուսաբանել , թոյլ տուաւ անոր  
 վկայութիւնն ալ լսել : Պ . Զատիկ սահուն  
 ֆրանսերէնով մը ո՛չ միայն մեր գործելու ե-  
 ղանակը պաշտպանեց , այլ իբրեւ ընտանիքի  
 հայր խղճի մտք բացատրեց թէ ի՛նչպէս տը-  
 ղաքը շատ աւելի լաւ եւ նպաստաւոր ապա-  
 գայ մը պիտի ունենային Տիար Էդնահանի  
 պաշտպանութեան տակ եւ թէ ի՛նչ մութ եւ  
 տխուր լուրեր եկած են մեզ Լոնտոնէն պատ .  
 Թուժահանի նկատմամբ : Հարկ չկայ բացատ-

1007  
 3469

դելու պատ . Թուժահանի եւ իւր փաստաբանին  
 ինքզինքնին պաշտպանելու ճիգերը : Նախա-  
 գահ պ . Տիթ առաջին հարցաքննութիւնը  
 փակեց հետեւեալ որոշումով .

« Նկատելով որ այս տղաքը յանձնուած են  
 » պատ . Թուժահանին Հայոց Կաթողիկոս Հայ-  
 » բապետին անունով , իւր տեղւոյս ներկայա-  
 » ցուցիչ Հայր Քիպարեանը կը հրաւիրենք  
 » յառաջիկայ երկուշաբթի 22 դեկտեմբեր ,  
 » լսելու համար իւր վկայութիւնը եւ այլ տե-  
 » ղեկութիւններ , եւն , եւն : »

Որոշեալ օրը Հայր Քիպարեանի հետ կը ներ-  
 կայանանք Արգարութեան Պալատը , այս անգամ  
 նիստը շատ աւելի խորհրդաւոր կերպարանք մը  
 առած էր : Հայ եկեղեցւոյ արժանաւոր ներկա-  
 յացուցիչ մը իւր եկեղեցականի տարագով  
 ճիշտ նախագահին ղիմացը թիկնաթոռի մը  
 վրայ բազմած , իւր խոհուն եւ իմաստալից  
 պատասխանները կուտայ թարգմանի մը մի-  
 ջոցաւ :

Պատ . Թուժահան չուզեց Հայր Քիպարե-  
 հանը ճանչնալ իբրեւ Հայրապետին ներկա-  
 յացուցիչը : Հայր Քիպարեան հակառակը չի  
 պնդեց , այլ բացատրեց թէ ինքը Հայ եկե-  
 ղեցւոյ պարզ քահանայ մ'է Հայրապետէն  
 ճանչցուած եւ Պոլսոյ Պատրիարքութենէն  
 զրկուած իբրեւ հոգեւոր հովիւ Բարեղի եւ  
 Պելճիքայի Հայոց :



Աւելորդ է նկարագրել այն բոլոր հարց ու պատասխանները որ խնդրոյն շուրջը քարձան . ի վերջոյ նախագահը, պ. Տիթ, որոշումը յայտնեց այսպէս .

- « Նկատելով որ պ. Թումանեանը չընդունիր
- » Հայր Քիպարեանը իբրեւ ներկայացուցիչ
- » Հայոց կաթողիկոս Հայրապետին , մէկ ա-
- » միս պայմանաժամ կուտանք պէտք եղած
- » պաշտօնական թուղթերուն եւ կաթողիկոս
- » Հայրապետին տղաքներուն նկատմամբ իւր
- » կամքն յայտնող գրութիւններուն գալուն .
- » արդ' նկատելով նաեւ որ քննիչ ոստիկանու-
- » թիւնը հակառակ պ. Թումանեանի ամբաստա-
- » նութեանց, աղոց ներկայ վիճակին նկատ-
- » մամբ խիստ նպաստաւոր վկայական մը
- » տուած է, կը թողունք զիրենք իրենց ներկայ
- » վիճակին մէջ եւ կ'առաջարկենք Հայր Քի-
- » պարեանի որպէս զի հաճի հսկել այս որբ
- » տղոց վրայ , եւ իրեն կը յանձնենք զանոնք
- » մինչեւ որոշեալ օրը : »

Հայր Քիպարեան իւր վրայ թողուած պատասխանատուութիւնը սիրայօժար ընդունելը յայտնեց :

Նոյն ատեն փութացի այս տղոց եւ իմ կողմէն շնորհակալութիւններս յայտնել նախագահին՝ տղաքներուն ի նպաստ այսքան հաճելի որոշում մը տուած ըլլալուն համար :

Մինչեւ երրորդ դատավարութեան օրը, հայր Քիպարեան ստացաւ հետեւեալ կոնդակը .

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍՍՆԵԼԻ ԿՍՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍՍՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՍՐԲՈՅ ԷՉՄԻԱԾՆԻ .

Արժանապատիւ սէր Վասիլապոս քահանայի Քիպարեան, հոգեւոր հովիւի Հայոց Փարիզու, հարազատ Մայր Աթոռոյս, հայրապետական օրհնութեանք յայտնեմք :

Առաջիկայ յառաջ ընկալաք զհետագիւր Ձեր միջոցիւ ի Տիփլիս կաք եւ հաւաստի եղաք ընդ ապաշնորհ արարս պրօֆեսօր Թումանեանի , գորուս ասեք եքեւ ան չունի որքանոց եւ քեւ շահագործե գորքս մեր : Ի հետագիւր Ձերոյ յայտնեիք եքեւ ունիք գրեւ մանրամասն զհանգանակաց գործոյն , սակայն ցարդ ոչիկն ընկալաք զպատասխանի ի ձեկն եւ քեւ յանկողնուն կոնդակիս եւ սակաւ ինչ սխարռաքիւն մեր եւ ուղեւորութիւնն ի Տիփլիս քաղաքի դեպ ի Մայր Աթոռոյս : Արդ սովիկն հայրապետական կոնդակաւ մերով պատմութեմք Ձեզ անիս յեւ ստանալ զկոնդակն մեր տուեալ յանուն պ. Թումանեանի վասն որքոցն, անյնպեւ եւ զվկայականն դիւանի մերոյ տուեալ առ պ. Փիլիսեան , եւ երկրորդ առնուլ անմիջապէս ընդ հովանեաւ Ձեր գորքս յանձնեալս ի մեկն Փիլիսեան եւ քողոր ընդ հոգածութեանք պարուն Ա. Էզնեանի որ ազգասիրաբար եւ քիստոնեակական մարդասիրութեանք յանձն առնու հոգայ զապագայի անցիկն, անյնպեւ եւ գրեւ մեզ հանգանակեօրեկն զքարեգործութեանց պ. Էզնեանեի զի յղեցուք անա կողեակ օրհնութեան :



Օրհնելով Աստուծոյ զԶեզ ընդ հսկայն հօտին  
Ձերոյ բնակելոյ այր, մեաւ վառն ամենեցունիդ  
սոթարար՝

(Ստորագրութիւն)

Ի 21 Դեկտեմբերի 1902 ամի

եւ ըստ Տօմարիս ՌՅԾԲ.

Ի Հայրապետութեան մերում Ժ. ամի  
Ս. Բարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի  
Ի Վաղարշապատ. Թ. 1839

Երբորդ գատավարութեան, Թու. մատանի կողմէ միայն իւր փաստաբանը ներկայ էր : Նա խազահին ցոյց տուինք Հայրապետին վերագրեալ կոնդակը՝ իւր թարգմանութեամբ. սակայն Թու. մատանի փաստաբանը ժամանակ չահելու համար խնդիր հանեց որ Հայրապետը ճշգրտ չէ թէ քանի՛ տղայ յանձնած է, եւ այլն. այս եւ ուրիշ պատճառներով նախագահ պ. Տիթ առաջարկեց Հայր Քիւպարեանի երկրորդ եւ աւելի որոշ գիր մը բերել կաթողիկոս-Հայրապետէն : Երբ վերջին անգամ կրկին գատարան ներկայացանք Հայրապետին ուրիշ մէկ նոր կոնդակով միասին՝ Թու. մատանի փաստաբանը ստիպեալ ամբաստանագիրը ետ առաւ եւ ալ մեզ դէմ գատ չունենալը յայտնեց :

Պ. Թու. մատան յաչս հայ ժողովրդեան բարոյսայէս ջախջախուած՝ սատկած գիւակ մէջ այլ

եւս : Բայց ինք վերջին ճիգ մ'ալ ըրաւ վերջերս երկու զանազան տետրակներ հրատարակելով՝ կարգ մը սուտերով միասին տեսերը համոզելու. հոն մուկեանդութեան ու սուտերու տոպրակին մէջ զանազան փաստաբանութիւններ ցոյց կուտայ իւր շահատակութիւնները արդարացնելու նպատակով :

Ա. — Թէ ի՞նչու Ծ տղայ յանձնեցինք Թու. մատանի, քանի որ սա վստահելի մէկը չէ :

Յանձնեցինք որովհետեւ այս ինք տղաքն ալ ծնողք ունին, (ինչպէս արդէն բացատրեցինք) . ապագային տղոց ծնողաց կողմէ օրէնքին առջեւ մեզ պատասխանատուութեան չէինք ուզեր են թարկել, մանաւանդ որ այս տղոց ծնողքները պատ. Թու. մատանի եւ իւր ստորուկին ծանօթներն են : Հայր Քիւպարեանի վրայ պարտականութիւն գրինք որպէսզի Հայրապետին գրելով այս ծնողք ունեցող տղաքն ալ Թու. մատանի շահագործող ձեռքէն ազատէ. հոս հրապարակաւ կը հարցնենք թէ ո՞ր աստիճան պարտաճանաչ գտնուեցան այս մասին թէ՛ ինքը եւ թէ՛ իւր հոգեւոր պետերը :

Բ. — Թու. մատան կ'ըսէ թէ Հայր Քիւպարեան Լոնտոն «Պատանի» ի տպարանը միայն փնտռած է :

Պատուելին թող գիտնայ որ Հայր Քիւպարեան «Պատանի» ն խմբագրող որբերը փնտռած



է, զոր չէ գտած, մինչդեռ Թումանյան ընդհա-  
նուր Հայութեան այնպէս մը կ'ըլլեցուցած էր  
որ իբր թէ որբեր են սոյն թերթը խմբագրող-  
ները :

Գ. — Որբերը վունտած կամ փողոցներ ձը-  
գած չըլլալը կ'ուզէ հաստատել :

Բաւական է կարգալ Թումանյանի օյաշտպա-  
նութեան վստահուած նախկին որբերուն հե-  
տեւեալ գրութիւնը որ վերջերս գրքոյկի ձե-  
ւով հրատարակուեցաւ .

« Պատ. Թումանյան իր ստութեան գաղաթ-  
նակէտին կը հասնի երբ կը յայտարարէ թէ  
մեզմէ իւրաքանչիւրը իւր կարողութեան յար-  
մար գործի մէջ տեղաւորած է<sup>օօօ</sup>. ու աւելի  
յտոաջ երթալով, ընթերցողին առջեւ կը դնէ  
գործերու շարքը աննկարագրելի խեղաթիւ-  
րումներով, որոնց մասին քանի մը կարեւոր  
լուսարանութիւններ աւելորդ չենք համարեր :

« Սուտ է երբ կ'ըսէ թէ տղոց գրաշարու-  
թիւն սովորեցած ըլլալով, հիմա անոնցմէ  
երկուքը կարողացած են անդ. տպարանի մէջ  
մտնել ու գնահատուիլ, քանի որ այդ երկու  
պատանիները ոչ թէ գրաշարութիւն սովորե-  
ցան Թումանյանի որբանոցին մէջ, այլ արդէն  
վաղուց արհեստին տեղեակ ըլլալով առիթ  
տուին իրեն շահագործումի նոր աղբիւր մ'ալ  
աւելցնել տպարան մը հաստատելով. ասոր  
պերճախօս ապացոյցը այն է որ միայն, յա-  
ջողեցան տպարան մտնել այդ երկուքը չըն-  
չին վարձատրումով մը: Պատ. Թումանյան միշտ  
կը ջանայ երկդիմի խօսքերով ընթերցողին  
միտքը պղտորել: Կ'ըսէ թէ ուրիշ մը դեղա-  
գործի քով է. բայց ի՞նչ կ'ընէ հոն, ի՞նչու չի

յիշեր որ խեղճ տղուն գործը աստուընէ մին-  
չեւ իրիկուն ձեռքի կառքով դեղարանի ապ-  
րանքները մէկ խանութէ միւսը փոխադրել է:  
ուրիշ ոչինչ, որ կրած ֆիզիքական քայքա-  
յումէն զատ բան մը չի մնար իրեն: Ուրիշ մը,  
կ'ըսէ, վաճառականի մը քով է. բայց վաճա-  
ռականի մը քով ըլլալը ի՞նչպէս կրնայ իրեն  
առիթ տալ այդքան գովարանութիւններ կար-  
գալ, քանի որ անոր գործը Պօլսոյ վաճառա-  
տուններուն մէջ արիւն-քրտինք թափող վան-  
ցի ու Մշեցի բեռնակիրներու գործէն աստի-  
ճան մը անդին չանցնիր: Իսկ ուրիշ մըն ալ  
իրբ թէ զարդադիր ապակեգործի մը նոր հաս-  
տատուած ճիւղին մէջ տեղաւորուած է: Ի՞նչ  
հրէշային խեղաթիւրում. բայց իրողութիւնը  
սա է որ այդ տղան, շնորհիւ պատուելիին,  
ապակիի հսկայ ֆապրիքային մը մէջ բանու-  
րական է՛ն տաժանելի ու է՛ն ստորնացուցիչ  
գործը ստանձնած է ակամայ՝ փոխան այնպիսի  
չնչին գումարի մը, որ նոյն իսկ անկարող է իր  
օրապահիլը հայթայթել, մէկդի թողլով օր ըստ  
օրէ կրած ֆիզիքական ահաւոր քայքայումը:  
Այո՛ ճիշդ է թէ այդ ֆապրիքային մէջ ճիւղ  
մըն ալ կայ որ զարգագիր ապակիներ կ'ար-  
տադրէ, եւն. սակայն տղան աւելածուի ու  
ընդհանրապէս ահագին ապակիներ վեր վար  
տանելու անհանդուրժելի գործն է որ կ'ընէ  
միայն եւ այնպէս ընել պիտի հարկադրուի  
ցմիշտ եթէ հոն մնալու դժբաղդութիւնը ու-  
նեմայ: Դարձեալ թէ ուրիշ մ'ալ վաճառական  
ամենամեծ կազմակերպութիւններէն մէկուն  
քննութիւնը անցնելով, յաջող դիրքի մէջ է:  
Նախ ի՞նչպէս կրնայ իրեն վերագրել բան մը  
որ ինք այդ տղան վնասելով իբրեւ անհնա-  
զանդ, ծնողքը տեղս գտնուելով, զայն առած  
եւ պատրաստած են ամիսներով եւ հազիւ հազ  
յաջողցուցած են, աքով փառաւոր հարուստ մը



տալով պատուելիին ապօրինի ընթացքին, Ան-  
 շուշտ այնքան ալ նախանձելի բան մը չէ որ-  
 քան պատ. Թու մահանը կը ձգտի ցոյց տալ, ու  
 այդ յիշեալ ընկերը այսօր միեւնոյն մեր գըժ-  
 բաղդ վիճակին մատնուած պիտի ըլլար եթէ  
 ծնողքը չնորհիւ իր կարողութեան, իր ձեռն-  
 առութիւնը չչտապեցնէր ու զայն անօթու-  
 թեան վտանգէն չազատէր : Իսկ թէ մեղմէ  
 մէկն ալ «մեքանիստ» եւ ուրիշ մ'ալ «ճարտա-  
 րապետ» է եղեր, ատիկա պատ. Թու մահանի  
 վառ երեւակայութեան արդիւնք է : Մենք որ-  
 չափ որ մեր ընկերները կը ճանչնանք, ա-  
 նոնցմէ ոչ մէկը մեքանիստ եւ ոչ ալ միւսը  
 ճարտարապետ է : Ասանկ ճիւղային ստու-  
 թիւննե՛ր... : Ա.մ' թ է... :

« Սա պէտք է անվերապահօրէն խոստովա-  
 նինք որ տակաւին մեղմէ եւ ոչ մէկը նա-  
 խանձելի ու ապագայ խոստացող զիրքի մը  
 չտիրանալէ զատ նոյն իսկ անկարող եղած է  
 զանկ այնպիսի գործ մը որ քիչ թէ շատ օ-  
 րական ապրուստը ապահովէ : Այսօր իւրաքան-  
 չիւրիս վիճակը ճակատագրական բարակ թիւի  
 մը կախուած է միայն, ամէն բոլորէ կենթակայ  
 փութելու վտանգին, որուն մէկ կատակը կրնայ  
 մեզ կորուստի է՛ն ահաւոր անգուռը գահա-  
 վիժել : Եղան մեղմէ՛ ու մանք, որոնք չկրնալով  
 սոկալ գործին, 3-4 ամիսներ Լոնտոնի փողոց-  
 ները թափառելու դժբաղդութիւնը յանձն ա-  
 բին, ուրիշներու՝ ու նամանաւանդ իրենց նը-  
 ման անկարող ընկերներուն՝ օգնութեան ա-  
 պաւինած : Մէկը որ հակառակ իր լեզուի ան-  
 ընդունակութեան զոնապան մը եղած էր պատ.  
 Թու մահանի միջոցով, իր գործին անյարմա-  
 րութեան մասնաւորապէս հիւանդութեան առ-  
 թիւ երբ վերակացուն պատ. Թու մահանէն կը  
 խնդրէ միջոց մը խորհիլ անոր ուրիշ բան մը  
 ընելու, Գրիստոնեայ պատուելին ուրիշ բան

չընէր բայց իր վրէժը լուծելու համար՝ այդ  
 խեղճուկ տղէն, կը գրէ վերակացուն. որ՝ ա-  
 ռանց վախի ազատ է հեռացնել, աւելցնելով  
 միանգամայն թէ, թէպէտեւ ինք բան մը չի  
 կրնար ընել բայց եւ այնպէս ան ուրիշ բարե-  
 կամներ ունենալով կրնան հողալ զինք, մինչ-  
 դեռ շատ լաւ գիտէր թէ այդ տղան մեղմէ ի  
 դատ ուրիշ մէկը չէր ճանչնար Լոնտոնի մէջ :  
 Ու այսօր երբ այս տողերը կը գրենք, ան ար-  
 ղէն երկու ամիսներէ ի վեր գրեթէ անձրեւին  
 արեւին տակ քրտնաթաթախ հսկայ Լոնտոնին  
 մէջ հոս հո՛ն կը վազվառէ, բոլորովին պատ-  
 րաստ ու եւ է գործ ստանձնելու դէժ անօթու-  
 թեան սպառնացող վտանգէն ազատելու : Յիշ-  
 եալ անոք տղան, պէտք է ըսել որ մեր էն  
 փոքր ընկերն է : Ու այս բոլոր եղբարկան  
 դժբաղդութեանց միակ հեղինակը ինքը պատ.  
 Թու մահանն է, թողլով որ ումանք ալ խոհա-  
 նոցի մէջ աման լուացող, ուրիշ մը ախտուի մէջ  
 ձիւր մաքրող, եւ այլն, որոնց անուներ մինչեւ  
 անգամ չտար անգուռական խաբեբան — դեռ  
 ելլել ու հրապարակաւ պարծիլ թէ իւրաքան-  
 չիւրս իր տաղանդին ու յարմարութեան հաւ-  
 մամատ գործերու մէջ տեղաւորած է՞օօ — շի-  
 նակը մենք անկարող կը զգանք այդ տեսակ  
 արարք մը ճշգրտօրէն որակող բառ մը գտնել .  
 միայն ընթերցողին լուրջ գատողութեանը  
 կը թողունք զայն :

« Բարձրագոյն կողմերէ տեղացող կրկնակի  
 խնդրանքներու համաձայն ու նկատողութեան  
 առնելով խնդրոյն տաղանայոյց այժմէու-  
 թիւնը ու մասնաւորապէս շահեկանութիւնը՝  
 այսօր Հայ ժողովուրդին առջեւ կը դնենք  
 կարգ մը կարեւոր լուսարանութիւններ, որ  
 ուրիշ նպատակ չունի բայց միայն իրողու-  
 թիւնը իր իսկական էութեամբը ծանօթացնել,  
 ու միան լամայն ընդմիջտ զըռչացնել մեր ազ-



զը այլ եւս ո եւ է հաւատ չընծայելու որբախը-  
նամի եւ ուսումնասէր բարերարի դիմակին տակ  
թագնուած ու խարուսիկ համբաւներով յըզ-  
փացած պորտաբոյծ խաչագողներուն ու բո-  
ղոքական հաւատորս պատուելիներուն, որոնց  
է՛ն նշանաւոր պարազուխը կը հանդիսանայ  
պատ . Կ. թումանեան .

« Ընկերական ատեանի մ'առաջ, ի ներկա-  
յութեան մեր եւ պատ . թումանեանի , շատ մը  
երկար բարակ վիճարանութիւններէ վերջը  
ներկաներէն մին՝ անկարող ո եւ է եզրակա-  
ցութեան յանգելու Պատուելիին կտրուկ ու  
անճարակ փաստաբանութիւններէն , վեր կը  
ցատկէ տեղէն ճարահատ՝ ու սա հարցումը  
կ'ուղղէ իրեն . — «Ուրեմն այս տղաքը անբա-  
րոյական չար սրիկաներ են» : — «Ընդհակա-  
ռակը, ոչ չար են եւ ոչ ալ սրիկայ, կը պա-  
տասխանէ պատ . թումանեան : այլ միայն իմ  
սրտիս ուզածը չըրին . . . եւ այսուհետեւ եթէ  
նոյն իսկ անոնց Լոնտոնի փողոցները անօթու-  
թենէ մեռնիլը գիտնամ, ալ պզտիկ օգնութիւն  
մը չեմ ըներ իրենց . . . :

« Ահաւասիկ ամբողջ չարեաց աղբիւրը .  
«Քրտին ուզածը» կատարելու զժկամակեր ենք :  
Բաւական մեծ ճշմարտութիւն կայ ատոր մէջ :  
Այս արտաքենապէս բարեգործ ու ներքնապէս  
մոլեռանդ բողոքականը եւ իր կրօնական է՛ն  
վատթար ու ստորնացուցիչ գաղափարներով  
տոգորուած կեղծաւոր կիւնը ամէն գերագոյն  
ջանք թափեցին երբեմն անուղղակի եւ յաճախ  
ուղղակի կերպով հասկցնել թէ իրենց գլխա-  
ւոր նպատակն էր մեզ պատրաստել միսոնա-  
րական առաքելութիւն կատարելու համար  
«Պաւարեալ երկիրը» . . . : Ու ասիկա բացար-  
ձակապէս վաւերական է , քանի որ որբանոցին  
տարեկան reportներուն մէջ յայտարարած է  
միշտ : Սակայն եւ այնպէս , ամէն գործնական

ճիզեր թափելէ յետոյ՝ մեզի մեր հարազատ կր-  
օնքէն հեռացնելու համար, ա՛լ անոնց յու-  
սախար ու ապարդիւն հետեւանքը տեսնելով՝  
վճականօրէն որոշեց զանազան միջոցներով  
հեռացնել մեզ, նշմարելով մեր մէջ իր ուզա-  
ծէն բոլորովին տարբեր ձգտումներ եւ հակում-  
ներ : Այդ ամբարտաւան ու զժխեմ արարածը ,  
լոկ իր վրէժխնդրական կիրքերուն յաղեցում  
տալու տմարդի հաճոյակատարութեամբ այնոր  
մեզ լքած է Լոնտոնի ապախտ ժխորին մէջ  
նիւթական փլուզումի է՛ն աղետալի վիճակին  
ենթարկելով :

« Ամբողջ Վառնայի Հայ գաղութը վկայ է  
թէ պատ . թումանեան ի՞նչ յորգառատ խոստում-  
ներով կանչեց մեզ , բայց ասոնցմէ եւ ոչ մէկը  
գործադրելէ դատ՝ հիմա ալ այսպէս հալումայ  
զրութեան մասնեց . Ու այս ամենը աչքի ա-  
ռաջ ունենալով՝ մենք մեր հինգ վեց տարուան  
դառն փորձառութենէն յետոյ սա տխուր եզ-  
րակացութեանը կը յանդիմնք թէ , պատ . թու-  
մանեան ո՛չ միայն անպութ եւ անզուգական  
խաչագող մըն է այլ եւ հայ մատղաշ կեանքեր  
փճացնող վատ մ'ալ , Բառին ճշմարիտ առու-  
մով որբանոց գոյութիւն չունի թումանեան ա-  
նուան տակ . պատ . թումանեանի հաստատու-  
թիւնը ո՛չ որբանոց եւ ո՛չ ալ ուսումնարան ,  
այլ պարզապէս ՇԱՀԱԳՈՐԾԱՐԱՆ մը կամ աւե-  
լի ճիզը՝ ինչպէս վերջերս գեղեցկօրէն յոր-  
ջորջուեցաւ ՈՐԲԱՎԱՃԱՌԱՆՈՑ մը :

« Պէտք է համոզուիլ որ պատ . թումանեան  
հոն որբեր հաւաքելով ոչ թէ անոնց օգտա-  
կարութիւն ընել կը ձգտի , այլ իւր հօտը  
բազմացնելու մոլեռանդ ջանքեր, որուն իբրեւ  
կենդանի ապացոյցներ կրնանք երեւան բե-  
րել , թողով գեռ միւսները, Մանչէստրի քահա-  
նային տղոց հաղորդութեան արդելումը , ա-  
ռարկելով թէ՛ «Քանի որ անոնք բողոքականի



» հաց կ'ուտեն , պէտք է անոնց օրէնքներուն  
 » եւ ծէսերուն համակերպին » , ինչպէս Անգլ-  
 վիսցիի մը գրած նամակը որով խտիւ կը  
 պատուէրէր միամիտ Անգլիացիին բնաւ օգ-  
 նութիւն մը չընել ու եւէ լուսաւորչական  
 տղոց, որովհետեւ անոնք բոլորն ալ անխտիր  
 « խաբեքաներ, անհնազանդներ , սրիկաներ եւ  
 » ապերախտներ են... » ու այս նամակին  
 ճշգրտութիւնը ինքն ալ անկարող եղած է  
 հերքել, երբ զայն կարգացողները լուսարա-  
 նութիւն մը ուղած են իրմէ այդ մասին :

« Ալ խնդիրը հասարակութեան առջեւ պարզ  
 ու յստակ կեցած է, այնպէս որ ամէն ընթեր-  
 ցող գիւրաւ պ'տի կրնայ դատել եւ ճշգրիտ  
 գաղափար մը կազմել խնդրոյն վրայով : Մեր  
 ներկայ անյոյս, սպառնացող դրութիւնը բա-  
 ւական պիտի ըլլայ արդէն հոյակապ պերճա-  
 խօսութեամբ ապացուցանել բովանդակ հոգե-  
 կան զազրելութիւնը Թումանեան կոչուած ան-  
 սէրտ արարածին, ու դատապարտել զայն ա-  
 նողորմարար : Մենք, նախկին որբերս, որ սկըզ-  
 քէն մինչեւ վերջ ամէն տեսակ խոչընդոտնե-  
 բու զխմազրաւելով, մեր ականատեսի հիմնաւոր  
 փաստերով զինուած, ջանացինք Հայ ժողովր-  
 դին լսելի ընել մեր բողոքը ու իրականու-  
 թիւնը բարձրաձայն պոռալ, այսօր կրկին հը-  
 րապարակ կ'իջնենք նոյնը ընելու աւելի ուժ-  
 գնօրէն :

« Ուրեմն այսուհետեւ թող ընթերցողը ըզ-  
 գուշանայ եւ զգուշացնէ այլեւս զո՞հ չերթա-  
 լու պատ . Թումանեան անուն անզուգական  
 ճիզուելիքին : Մեր եղերական ու ցաւալի ան-  
 ցեալը աչքի առջեւ ունենալով, խնայեցէք  
 Հայ որբերուն... ի գիմաց մեր ընկերներուն .

« Ա. Գուլյումեան, Հ. Ազարպարեան, Մ.  
 Անդրեասեան, Մ. Բարսեղեան .

« 34, Seymour Place, London, W. » :

Դ. — Թումանեան արդարանալի կը գտնէ  
 որբերը համախմբութեամբ տանելով դրամ  
 մուրալը .

Հոս աներեսութեան չափը կ'անցընես ,  
 պատուելի՛ , արեւելեան զանազան տարազնե-  
 բով խեղճ տղաքը ցոյց դնելով, ի՞նչ, կը կար-  
 ծես որ հայ արիւնը կրող երախտները» « Պառ-  
 նըմ » ի (Barnum) այլակերպ անասուններն են :

Ե. — Պատուելին իւր հրատարակած տես-  
 րակով կը խոստովանի թէ՛ Բարիզ հասնող  
 տղոց համար իբր ճանապարհածախք 6386  
 ֆրանք հանգանակած է . լա՛ւ . այսքան խո-  
 շոր գուժար մը բաւական չէ՞ր միթէ տղաքը  
 մինչեւ Լոնտոն հասցնելու , ի՞նչ հարկ կար  
 Բարիզ աջ ու ձախ զիմելով դրամ մուրալ եւ  
 այս շահատակութիւնը յաջողցնելու համար  
 տղոց վրան գլուխը ամենաողորմելի վիճակի  
 մէջ , գրեթէ առանց գուլպայի , ոտքերնուն  
 մէկ մասը կոշիկներէն զուրս ելած , իսկ հա-  
 գուսանին ամէն կողմէ պատուած ձմեռ ժամա-  
 նակ փողօցները թափառեցնել . տղոց այսքան  
 ողորմելի վիճակի մէջ ըլլալը նոյն իսկ տեղ-  
 ւոյս ոտախկանութեան ուշադրութիւնը գը-  
 բաւած էր : Պատուելին բոլորովին լուռ կ'անց-  
 նի տղոց առաջնորդին Չոլիցերիոյ մէջ կա-  
 տարած շահատակութիւններու մասին . ի  
 նպաստ իրենց քսակին տղաքը այսքան աղտոտ



եւ խեղճ վիճակի մէջ բողոքական ժողովարաններու մէջ ցոյցի դնել՝ ԱՄՕԹ Չէ՞ :

Չ. — Իբր թէ տղաքը նո՛ւ փան գտնուած ժամանակներն լաւ խնամած չենք .

Թումահան այս սուտ ամբաստանութիւնը գատարանին առջեւ ալ ըրաւ . բայց նախագահը պատուելիին ըսածին բոլորովին հակառակը հաստատող քննիչ ոստիկանութեան վկայականը ցոյց տուաւ թէ՛ «Տղաքը խիստ նպաստաւոր վիճակ մ'ունին, բնակարանի մաքրութիւնը, սնունդ եւ այլ պէտքերու առատութիւնը կատարեալ վստահութիւն կը ներշնչէ չէ՛ մեզ» : Թումահան չամչնար նաեւ երեւակայական դիտողութիւններ ընել բազմավաստակ ուսուցիչ Տիար Մկրտիչ Մեզպուրեանի դատեր, տիկին Ա. Քալչինեանի նկատմամբ . ճշմարտութիւնը սա է որ այս տրդար հայ կիներ պահ մը իւր ամուսինն եւ զաւակը մոռնալով կատարեալ անձնութիւնութեամբ օրերով գիշեր ու ցերեկ խնամեց ազգին դժբաղդ զաւակները :

Է. — Թումահան չուրանար որ մինչեւ այսօր որբերուն շնորհիւ Լոնտոնի մէջ երջանիկ կեանք մը վարած է՝ ունենալով նոյն իսկ իւր անձնական տան կառքը . ա՛լ աւելին . դատարանի առջեւ ինքզինքը հանրածանօթ եւ պատուաւոր մէկը ճանչցնելու համար նախագա-

հին ցոյց տուաւ ծանօթ գրամատուններու մէջ իւր պահեստի գրած ոսկիներուն վկայագիրը . այս բոլորը իւր արդար իրաւունքը եղած պիտի ըլլար եթէ դիմած չըլլար ճիշդութեան ստորնացուցիչ միջոցներու զոր ծառայեցուցած է իւր անձնական քսակին, առանց ո եւ է օգտակարութիւն մը ցոյց տալու աղբին որբերուն . այս վերջինները իւր ափին մէջ պահած է լոկ հասարակաց աչքը շլացնելու նպատակով :

Ը. — Թումահան ամչցող կամ յուսահատող մարդ չէ . իւր հրատարակած վերջին տեսրակներով կ'ըսէ . «Խղճերնիս հանդարտ կը շարունակենք մեր գործը , կրկին առանց աղղէն օգնութիւն մը կամ դնահատում մը սպասելու , — որուն սակայն եթէ արժանանանք սիրով կ'ընդունինք եւ կ'արձանանք որքանք առանց արհամարհելու » — Այժմ իւր քով որբ մ'իսկ չունի , իւր ճանկին տակ գրտնուող տղաքը ունին երկրագործ , արհեստաւոր ու պատուելի ծնողքներ . ազգը ի՞նչ պարտք ունի այս մարդոց զաւակները պահելու . ընթերցողին կը թողում դատել Թումահանի ընթացքը որ կրկին իւր բարոյապէս սատկած վիճակին մէջ կը համարձակի ճիշդութեամբ քննիչ ազգին միամիտ ամբոխին առջեւ որպէս զի անոր լուծանքով առանց



աշխատութեան գիղէ ու գիղէ գրամ ու միշտ  
գրամ. այս է իւր միակ մտածումը :

Թ. — Դատարանին առջեւ ու ամէն տեղ  
պատուելին խօսեցաւ գրեց ու ճտոեց թէ  
« Մենք իւր անձին ղէմ կը գործենք քանզի  
» ինքը բողոքական պատուելի մ'է եւ ճըշ-  
» մարտութենէ բոլորովին հեռու են իւր ղէմ  
» եղած ամբաստանութիւնները . » Թումանեան  
իւր անձին եւ գործունէութեան նկատմամբ  
եղած ամբաստանութիւնները հերքելու համար  
ճշմարիտ փաստ չունենալով միշտ սուտերով  
լ'ուզէ ինքզինքը պաշտպանել . Թումանեան  
թող լաւ գիտնայ որ գոնէ ինձ համար եր-  
բեք տարբերութիւն չունի թէ մի քանի որ-  
բեք տէրտէրի մը կամ պատուելիի մը հսկո-  
ղութեան տակ կը կրթուին . մին միւսէն ա-  
ւելի նախընտրելու երբեք պատճառ մը չկայ :  
Թումանեանին ղէմ մեր բռնած գիրքին մէջ  
« կրօնակէտ » խնդիրը երբեք գեր չէ կատա-  
րած . եթէ Վրամշապուն քահանան ունեցած  
ըլլար Թումանեանի ընթացքը , Վրամշապուն  
քահանային ղէմ ալ նոյն ձեւով պիտի պայ-  
քար մղէինք . մեզ պէտք եղածը սա է որ ,  
մեր նոր սերունդը , ուր կամ որու քով որ  
գտնուի չի մոռնայ իւր ծագումը , մայրենի  
լեզուն եւ իւր պապերուն աւանգութիւնները .  
Թումանեան ասոնց եւ ոչ մէկուն կարեւորու-

թիւն չէ առած երբեք , եւ միշտ միմիայն  
իւր շահը մտածած է : Հայոց կաթողիկոսը հա-  
ճած էր իւր ազգին որբերէն մի քանին յանձ-  
նել Թումանեան պատուելիին , մի՞ թէ Վրամշա-  
պուն քահանան կամ Փարիզի Հայերը՝ կաթո-  
ղիկոսէն աւելի լաւ լուսաւորչականն'ը են  
որ յարմար չի տեսնեն որբերուն պատուելիի  
մը յանձնուելը , երբե՛ք . Հայր Բիպարեանը եւ  
Բարիզի Հայերը ազգին ճշմարիտ որբերը  
Թումանեանի ձեռքէն ազատեցինք որովհետեւ  
նա ՈՐԲԵՐ ՇԱՀԱՊՈՐԾՈՂ Մ'է , ահա այս է  
ճշմարիտ պատճառը եւ ոչ թէ կրօնամոլու-  
թիւն :

Ժ. — Թումանեան կը մեղադրէ մեզ թէ մենք  
էինք առաջին անգամ օրէնքի դիմողը :

Ոտոնկանութեան գիտութեամբ տղաքը  
փախուցինք , քանզի ուրիշ կերպ չէինք կա-  
րող գործել տղաքը Թումանեանի ճանկէն ազա-  
տելու համար , իսկ առաջին անգամ դատարա-  
նի դիմողը Թումանեան ինքն եղաւ , ոչովհետեւ  
լաւ գիտէր որ ընկերական դատարանի առջեւ  
անպատճառ պիտի դատապարտուէր , ուստի իւր  
կրած բարոյական պարտութեան փոխարէն  
ուզեց օրէնքի առջեւ մեզ « առեւանգիչ »-  
ներ ներկայացնել տալով վրէժ լուծել , բայց  
ի դուր : Այսօր Թումանեան ֆրանսական դա-  
տարանի առջեւ ճանչցուած է իբրեւ exploitateur



d'enfants ( «տղաքներ շահագործող» ) մը .  
 Հայոց Հայրապետը կոնդակով մը մկրտեց զին-  
 քը « ապաշնորհ » անունով , իսկ մենք հայ  
 ժողովրդեան հետ իրեն կ'ուղարկենք մեր բո-  
 լոր արհամարհանքները եւ «որբավաճառ» տիտ-  
 ղոսը :

Այս մանրամասնութիւնները հրատարակու-  
 թեան տրուելուն պատճառը պ. Թումանյանի  
 երկու զառանցական տետրակներուն պատաս-  
 խանած ըլլալու նպատակով չէ , այլ՝ ճանչ-  
 ցընել մեր ժողովրդեան պ. Կ. Թումանյանի նը-  
 կատմամբ եղած ամբաստանութիւններուն կա-  
 տարելապէս համարիտ ըլլալը : Ուստի կը  
 խնդրուի հայ ժողովուրդէն որ ուշադրութեան  
 առնէ հետեւեալ ազգը, յանուն իւր որբերուն .

**Մի՛**

» Մի՛ յանձնե՛ք մեր ապագայի սերունդը՝ պա-  
 սահույիս մի՛ սա՛ք մեր որբերը պասսահական պաս-  
 ուեղիներու, սերսերներու, իշխանութիւններու , կոմ-  
 սուիսներու փայլուն եւ խոստմնաշից ապագայի  
 մը յուսով, նոյն իսկ երբ ստնե՛ք ներխայտան  
 ձեզ վկայագրերով, կոնդակներով կաւ հրովար-  
 սակներով :

« Ձեր այդ պգտիւններու հոգին փոխելու կաւ  
 ապագան ապահովելու պատրուակին սակ , գործի  
 մարդիկ, իրենց քակը կը պարտեն եւ յայն  
 մարդկութեան քարի գործի հաւքաւ շինելու կը  
 նկրտին . . . »

«Մեր պապերուն անձաւոր այս ստուտորը .  
 դարավերջիկ ձեռնարկ մ'ե Արեւմուտքի մեջ :  
 « Այս նոր տեսակ բարեգործները կրնան նոյն  
 իսկ ծախել մեր որբերը :  
 « Չգուշորի՛ ըն, զգուշորի՛ ըն : »





Բ

Ա Պ Ի Կ Ա Ր Ա Ռ Ա Ջ Ն Ո Ր Դ Ր

Բարիզի որբերուն խնդիրը այժմէութիւնս  
ունեցած ժամանակ հետեւեալ կերպով գրած  
եմ «Բիւզանդիոն» հայաթերթին մէջ (Տես թիւ  
1900 • Յունուար 2, 1903) :

«Թողունք պատուելին իր անել եւ դժբաղդ կացութեան  
մէջ եւ ուշադրութեան առնենք թէ ո՞վ է նաեւ պա-  
տասխանատու Բարիզի եւ Լոնտոնի մեր տղոց ներկայ  
դրութեանը Եւրոպայի ընդհ. առաջնորդը տարին 4-5  
անգամ Բարիզէն անցնելով Լոնտոն եւ Մանչէսթըր  
կերթայ իւր սրտեալ թոշակներն եւ ժամուց ստանա-  
լու համար . չենք կրնար պատճառ մը մտաբերել թէ  
ի՞նչու մտէն չէ ուղած անցնիլ թուամեան պատուա-  
րանին, գիտնալու համար թէ ի՞նչ կ'ըլլան մեր տղաքը :  
Քաղաքավարական պարզ այցելութեան մը քողին տակ  
կարող էր Լոնտոնի հեռաւոր մէկ անկիւնը զանուղ  
պատ. թուամեանի կարծեցեալ պատուարանն ու տղաքը  
քննել, ըսյց հոն անշուշտ ինք ժամուց տալու հարկին



ենթարկուելու վախով չէ ուզած մտենալ... : Չենք հասկնար թէ ի՞նչու ծերունի Հայրապետը չուզեր զբաղել ընդհանրապես առաջնորդութեան խնդրով, մեր ներկայ առաջն գը փոխանակ օգտակար գործերով զբաղելու, ուր որ կ'երթայ տիրացուական խնդիրներ կը ստեղծէ եւ իր սննդական հակառակութիւններուն գոհացում տալու համար ժողովուրդ եւ քահանայ իրարու դէմ կը հանէ, օրինակ Մանչեսթըրի քահանային խնդիրն ոգի ի բռին հրահրելը, Մարտիկոյ քահանայի խնդիրն եւ ասոր հետեւտնք ծանօթ տգեղ գայթակղութիւններն եւ որ աւելին է, Բարկզի մէջ եւս այս տեսակ խլրտումներ կը ստեղծէ : բարեբախտաբար տեղւոյս հոգեւոր հովիւն իւր խոհուն եւ յուրջ բնութեամբ ամէն այս կերպ խնդիրները մարելու կարող անձ մէ : Եթէ մեր առաջնորդը ժողովրդեան սերն ու վստահութիւնը գրաւող եկեղեցական մըլլար, կարող էր Լոնտոնի, Մանչեսթըրի եւն համայնքներէն՝ Տխար Էգնատեանի օրինակելի գործունէութեան նմանող շատ մը սերիշներ ալ գտնել : »

Իւթիւճեան եպիսկոպոս Բարկզի Հայոց իւր պէմ ունեցած դժգոհութիւններէն նեղացած եւ միանդամայն վռամչապուհ քահանային դէմ ունեցած խուլ հակառակութեան կամ աւելի ճիշդ՝ նախանձին գործնական գձուձ ձեւով մը ալ աւելի ուժ տալու համար չվարանեցու Հայրապետին ուղղեալ տեղեկագրով մը պաշտպանել խաչագող Թումանեան մը :

Եւրոպիոյ Հայոց առաջնորդը ուշադրութեան թող առնէ որ Հայր Քիպարեան երբ Լոնտոն գնաց, Թումանեանի որբանոց անուն շահաստանին մէջ Թումանեանի հայ ժողովրդեան ուէքլամ ըբած «Պատանի»ն խմբագրող որբերէն հաս» մ'իսկ չգրաւ, եւ նոյն ատեն Լոնտոնաբը-

նակ խիստ պատուաւոր ազգայիններէ պատուելիին նկատմամբ առած բուրրովին աննըպաստ տեղեկութիւններ եւ որ աւելին է Թումանեանի նախկին որբերէն առած բուրրովին աննպաստ ու սրտաճմրիկ նամակները եւ այլ ծանօթ շահատակութիւններ ստիպեցին վռամչապուհ քահանան եւ մանաւանդ մենք պարտականութիւն զրինք իւր վրայ որպէսզ զրէ Հայրապետին ճշմարտութիւնը թէ — Թումանեանի ունեցածը որբանոց չէ այլ որբաւլաճառատուն է :

Իւթիւճեան Դէորդ եպիսկոպոսը Թումանեանի դէմ եղած ամբաստանութիւնները հերքելու համար ճշմարիտ փաստ չուենալով միայն կ'ըսէ թէ՝ «Թումանեան որբանոց մը ունի Լոնտոն» : Կա՛ւ, բայց խնդիրը Թումանեանի որբանոց անուն չէնք մ'ուենալուն վրայ չէ : չէնքի մը դոյութիւն ունենալը կամ չ'ուենալը մեզ կամ ընդհանուր հայ ժողովրդեան ի՞նչ փոյթ • խնդիրը սա է որ Թումանեան իրեն վստահուած որբերը շահագործած է ամենատգեղ միջոցներով, ու առանց խղճահարութեան իւր «որբանոց» անուն չէնքէն վոնտած ու ողորմելի պայմաններու տակ շարաշար աշխատութեանց մէջ մտնելու հարկադրած է մեր անտէր ու անպաշտպան երախաները՝ Լոնտոնի պէս սվկի-



անոս քաղաքի մը մէջ . աւելորդ է նոր փաստեր շարել , զի ինչ որ արդէն ըսինք շատ իսկ է Թումանյանի որբավաճառ խաչագող մը ըլլալը հաստատելու համար : Իւթիւճեան, Սէն-Քլուսի պարտէզներուն à la mode մօրուքով եպիսկոպոսը, շատ լաւ գիտէ որ մեր ըսածները կատարելապէս ճշմարիտ են, բայց Բարիզի Հայոց իւր դէմ ունեցած դժգոհութիւններուն փոխարէն բան մ'ըրած ըլլալու համար չի վարանիր ճշմարտութիւնը կերպով մը քողարկել պաշտպանելով որբեր շահագործող հրէշ մը . . . միթէ ասկէ աւելի եսամոլ, դձուճ, անխիղճ ու զատապարտելի ընթացք մը կարելի է երեւակայել : Իւթիւճեան Գէորգ եպիսկոպոս իւր այս ընթացքով Թումանյանէ աւելի վատ դեր մը կատարած եղաւ :

Զարմանալի է որ Կորիւն վարդապետ իւր իսկ ստորագրութեամբ Գէորգ եպիսկոպոսի սուտ տեղեկագիրը թերթի մը մէջ հրատարակութեան տալու պատիւն ըրած է . մեզ այնպէս կը թուի որ Կորիւն վարդապետի այս եւ ուրիշ բազմաթիւ քննադատելի ընթացքները օր մը հարկադրեն Հայրապետը ըսելու իրեն — « ԿՈՐԻ՛Ր » :

Ս.յ՛, չենք հասկնար թէ ինչո՞ւ Հայրապետը չ'ուզեր զբաղիլ Ներսիսի Հայոց առաջնորդութեան խնդրով . Գէորգ եպիսկոպոս իւր հո-

վիւր պաշտօն ստանձնելէ ի վեր օգտակար գործ ըլլալով ոչինչ ըրած է , ընհակառակը կատարելապէս վնասակար եղած է իւր հօտին . թէ ինչո՞ւ .

Ս. — Բնութեամբ անբացատրելի ըլլալու աստիճան նախանձոտ , չուզեր որ իւր շուրջը գտնուած եկեղեցականներուն մէջ գտնուի մէկը որ սիրուած ու յարգուած ըլլայ ժողովուրդէն . Վռամշապուհ քահանայի դէմ ու՛ եցած հակառակութեան պատճառը միայն այս է , Իւթիւճեան եպիսկոպոս Մանչէսթրիոց իրենց հովիւին հետ ունեցած անհամաձայնութիւնը փոխանակ խաղաղեցնելու ամէն միջոց գործադրեց դժգոհութիւնները ա՛լ աւելի հըրահրելու համար, քանզի Տէր Զուղայեցին հակառակ իւր կարգ մը տգեղ թերութիւններուն Իւթիւճեան եպիսկոպոսէն շա՛տ աւելի ուսեալ եւ կարող եկեղեցական մ'է :

Բ . — Մարսիլիոյ Հայոց այսքան երկար ժամանակ առանց քահանայի մնալուն եւ այս փոքրաթիւ ժողովրդեան երկու կուսակցութեանց բաժնուած ըլլալու պատճառն ալ ինքն եպիսկոպոսն է . այս արծաթասէր մարդը չ'ուզեր որ Մարսիլիացիք քահանայ ունենան զի այն օրը որ տէրտէր մը ոտք կոխէ հօն , իւր եկամուտները կը պակսին մկրտութիւն , պըսակ , թաղում եւ այլ այս կարգի շահաբեր ձե-



ւակերպութիւններ իւր հասոյթներն են այսօր Մարսիլիոյ մէջ :

Գ. — Իսթիւճեան եպիսկոպոս երբ ունէ գործի մէջ կը աեսնէ որ իւր անձնական եսը ցոյցի դրուած չէ , չի վարանիր զայն անգործութեան դատապարտել , նոյն իսկ կ'արհամարհէ իւր հոգեւոր պետին Հայրապետին հրամանն ու կամքը . օրինակ՝ ասկէ շատ առաջ Հայրապետը Բարիզ օրհնութեան կոնգակ մը կը զրկէ տեղւոյս նոր եկեղեցին շինող պ . Մանթաշեանի , մատրան հոգաբարձութեան , ժողովրդեան եւ վճարատուէն քահանային ուղղեալ . Եւրոպիոյ Հայոց առաջնորդը արգելեց որ այս կոնգակը մատան մէջ կարգացուի , քանզի օրհնութեան գրին մէջ իւր անունը յիշուած չէր . . . ամիսներ յետոյ այլեւս անկարելի ըլլալով հակառակիլ ժողովրդեան կամքին , կոնգակը փառաւոր կերպով կարգացուեցաւ մատրան մէջ խուռն բազմութեան մը սոջեւ :

Ե . — Գէորգ եպիսկոպոս , լալկան ու ազահ , միշտ առանց ամչնալու նոյն իսկ թերթերու մէջ կը գանգատի թէ նիւթապէս անձուկ վիճակ մ'ունի . լուսաբանենք այս պարագան : Իւր տարեկան եկամուտներուն ցուցակը հետեւեալն է .

Բարիզէն տարեկան որոշեալ թոշակ	1000 ֆր ,
Մանչէսթրէն — — —	1500 —
Մարսիլիաէն կ'առնէ ամսական	200
Ֆրանք՝ տարեկան կ'ընէ . .	2400 —
Լոնտոն , Բարիզ , Մանչէսթըր , Մարսիլիա , Վիեննա , եւ այլն , իւր տարեկան այցելութեանց համար աջհամարոյ :	նուէրներ , եւն , առնուաղն . . . . .
	1000 —
Բարիզէն , եւ այլուր , մկրտութեան , պսակի , թաղման եւ այլն հրամանագրերէ գոյացած հասոյթ	. . . 600 —
Գումար . . . . .	<u>6500 —</u>

Ու այս կարեւոր գումարը ժողովրդեան գրպանէն կ'ելլէ ուռեցնելու համար անպէտ ու անօգտակար առաջնորդի մը գրպանը . . . իսկ շատ տեղեր մեր որբերը պատառ մը հաց չունին ուտելու ու նոյն իսկ ձմեռ ժամանակ խոտոջ մը իրենց կիսամեռ մարմնոյն հոնգիստ տալու համար . ընթերցողին կը թողում որոշել թէ ինչ տարբերութիւն կայ որբավաճառ թումանեանի եւ Իսթիւճեան եպիսկոպոսի մէջ . . . :

Վերջապէս անգամ մ'եւս կը խնդրուի Հայրապետէն որպէս զի հաճի ուշադրութեան առնել Եւրոպիոյ Հայոց ընդհանուր հովիւի ամենակարեւոր պաշտօնին անկերպարան վիճակը . այս պաշտօնին գլուխը հարկաւոր է ու-



նենալ լեզուագէտ, ուսեալ, զարդացած, խոհեմ  
եւ միանգամայն լուրջ մէկը, որպէսզի ըմբռնէ  
անոր բարձր նշանակութիւնը :



Այս գրքոյկին վաճառման  
զուտ հասոյթը  
պիտի յատկացուի Կ. Պոլսոյ  
Յալքուլէի Հայոց հիւանդանոցին :



---

ԳԻՆ

Թուրքիա՝ 40 փարա

Օտար երկիրներու համար՝ 50 սանթիմ

---



Հայաստանի Ազգային գրադարան



NL0421541



